

ծայր կուտար կանոնաւոր գործառնութեանց և կանոնաւոր տոմարակալութեանց եղանակ մը մէթոտեալ:

Արդէն՝ 1840էն 1850՝ Դաւիթ Սէթեան (հայր՝ վաճառական ու հաշուագէտ Միհրան Սէթեանի) և Մինէճի Անդրանիկ, առաջինն Եւրոպա երթեւեկած մետաքսի հին վաճառական մը ու երկրորդը Սամաթիայի մէջ ուսումնասիրական գործունէութիւններ ի հանդէս բերող եռանդուն անձնաւորութիւն մը՝ սկսած էին մղում տալ մերայնոց մէջ ⁽¹⁾ կանոնաւոր հաշուակալութեան, 10—20 տարի տոմարակալութեան ձրի դասեր տալով փափագողներու, որոցմէ էին, ի մէջ այլոց, Յարութիւն Թիւեան՝ քաջ թուաբան ու երկրաչափագէտ, Պօղոս Թորգոմեան ⁽²⁾՝ քաջ անգղիագէտ ու հաշուակալ ճիշդ, և՛ կարծենք՝ Բերորէ Լէմոնճեան՝ քաջ անգղիագէտ և հաշուակալ ու յօդուածագիր, հին Սուրհանդակ օրագիրին Լիւն Բէն: 1840-41ի Սկիւտարի Ճեմարանին ներհուն Յայտարարութեան մէջ ալ կը կարդանք՝ որ այդ գիշերօթիկ մեծ դպրոցին մէջ կայ եղեր կանոնաւոր տոմարակալութեան դաս մըն ալ. հո՞ն տոմարակալութիւն սորված են՝ Մարտիրոս Թոքատեան, Պետրոս Յնաթըքեան, Մկրտիչ Պէշիքթաշեան և այլք:

Կ. Պոլիսի հրապարակն ալ հետզհետէ աւելի՛ կը լայննար՝ այդ միջոցին՝ հայ վաճառականութեան համար, ինչպէս Զմիւռնայինն ու միւս գլխաւոր քաղաքներունը. մանաւանդ օտանիները բանուկ գործունէու-

(1) Այս և յաջորդ քանի մը տեղեկութիւններ կը պարտինք Ազն. Միհրան Սէթեանի՝ ներհուն հաշուագէտին և վաճառականին ինչպէս և Յակոբ Գ. Մըրմըրեանի, որ քսան տարի կեցած է ի Մանչեսթըր:

(2) Պօղոս Թորգոմեան՝ 1847-8ին Քափամաճեանց կողմէ Տատեանց հետ զնացած է Անգղիա՝ վաճառական ուսումի և գործակալութեանց համար, և կեցած է հոն կարծենք 7 տարի: